Հրատարակութեան առաջարկը որ եղած է առ Մխիթար՝ արդիւնքի մը չէ յանգած, ու պատճառը ծանուցանող ո՛ր և է թուղթ մ՚ալ չունինք ձեռքերնուս տակ։ Մեր Մատենագրութեան ծանօթ է սակայն, որ Ոսկեքայի այդ երկասիրութիւնը ցայսօր անտիպ կը մնայ. իսկ բուն բնագիրը կը գտնուի Վիեննայի Մխիթարեանց Մատենադարանին մէջ «Գանձ Հայոց Լեզուի կամ Բառարան Ստեփաննեան» տիտղոսով[1], իսկ Ս. Ղազարու Ձեռագրատան մէջ կայ ուղղակի անոր վրայէն 1840ին կատարուած օրինակութիւն մը մեր Հարց կողմանէ։

Օ: Յ: Ք:

Գերապայծառի և գերյարգելւոյ Տեառն Միխիթարայ Աբբայի Հօրդ մերում հաւատակի՝ մեծաւ խոնարհութեամբ մատուցանեմ զորդիական ողջոյն, և այլն։

Ցայտ առնեմ Գերյարգելութեանդ, զի Հոկտեմբերի 25ին յղեցի զգիր մի աստի ի կեռլայէն առ Գերյարգելութիւնդ, և ծանուցի ի նմին զորպիսութենէ իմմէ, և թէ գնալոց եմ ի Պաշֆալով։ Բայց մինչեւ ցայս վայր ոչ կարացի չուել աստի, ոչ վասն այլոյ պատճառի, քան վասն դժուարահոծ և աննհարին և անպատում ցեխալից ճանապարհաց, որք զարհուրեցուցանեն զմարդն ի յելանելն ի տանէն. և այս ոչ միայն ի քաղաքս և ի գիւղս, ի դաշտս և յանդաստանս, այլ նաեւ յանապատս և ի լերինս, և յամենայն ուրեք լիք են ճանապարհքն ցեխիւ և չաղախով։ Եւ պատճառ սորին է, զի 3 ամիսք են, յորմէ հետէ գրեթէ յամենայնում աւուր անձրեւեաց յառաւօտէ մինչև ցերեկոյ, և յերեկոյէ մինչև ցառաւօտ. և այսպէս՝ հաշուեա՛ թէ փտեցաւ գետինն, և պատառեցաւ երկիր։ Եւ վասն այսորիկ ամենայն ինչ տասնապատիկ թանկ է քան յառաջն, զի ցորեանն ի դէզսն ծլեալ է և փտեցեալ, և այլն… ..։ Գերյարգելի Տէր Աւագէրէցն Ամենօպօլսոյ, այսինքն Վերապատուելի Տէր Մինասն Թորոսեան, և իւր եղբայրն Վեր. Տէր Սիմէոնն մեծաւ սիրով և խոնարհութեամբ զողջոյն մատուցանեն և խնդրեն գիր ինչ ի Գերյարգելութենէդ։ Իսկ խնդիրքն այս ինչ է. զի (որպէս յառաջագոյն գրեցի) ողորմած հոգի Ստեփաննոս Վարդապետն թողեալ է զկնի իւր զանջնջելի յիշատակ, զպտուղ աշխատանաց երեսնից ամաց, այսինքն զազնիւ, զմեծագին և զյոյժ պիտանի գիրք իմն, յորում աշխատեցաւ գրեթէ զամենայն աւուրս կենաց իւրոց։ Ասեմ աշխատեցաւ. քանզի անխոնջ աշխատանօք զ30 ամս երկասիրեաց ի վերայ նորա։ Եւ այս է Բառգիրքն երկուց լեզուաց, այսինքն Հայկականի և Լատինականի. և է Գանձարան ամենայն բառից, մեծաւ արհեստիւ հաւաքեցեալ ի անթիւ գրեանց հայկականաց, և մեծագունիւ արհեստիւ կարգաւորեցեալ և զետեղեցեալ ի սեպհական տեղւոջ, այսու կարգաւ. քանզի ի նմին՝ նախ դնի բառն հայկաբանական, յետոյ մեկնի հայկաբանօրէն, և ի վկայութիւն բերի հեղինակն և գիրքն, յորմէ արտահանեցաւ բառն, նաև զանազան զգացմունքն, ի յորս առնանի ի զանազան տեղիս։ Զկնի սորա դնին նաև բառք աշխարհականք, որովք առաւել բացատրի գրաբառն, հուսկ յետոյ դնին բառք լատինականք հանդէպ Հայկականին, որպէս վկայէ Վեր. Տէր Սիմէոնն, որ եղև ականատես զամս բազումս, մինչ էր աշակերտ վերոգեցեալ Ստեփաննոս Վարդապետին։ Եւ կարծեմ թէ է այնպիսի գործ, մինչ զի յազգի մերում ոչ երբէք եղև, նաև ոչ կարծեմ թէ լինելոց իցէ, որպէս վկայէ վերոգեցեալ Վեր. Տէր Սիմէոնն. ես թէպէտ ոչ տեսի զայն ցայսվայր, զի է ի Լէհաստան։ Զսա ամենայն յանձնեն, նուիրեն և տեառնագրեն Գերյարգելութեանդ և Մենաստանին մերում, և խնդրեն զի հաճիցէ Գերյարգելութիւնդ ի լոյս ածել զնա ի ձեռն տպագրութեան. և ինքեանք զծախս ճանապարհին արասցեն, մինչև գիրքն հասանիցի ի Մենաստանն մեր. և թերևս

1. Տաշեան, Ցուցակ Ձեռագրաց, Հտ. Ա. Գիրք Բ. թիւ 6, էջ 22։